

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԼԵԶՈՒԻ ՊԱՏԿԵՐԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բան ոչ է քարքառ լեզուոյն, այլ՝ խոկումն մտացն:  
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Ա. Բառի տարողութիւնը պատկերաւորութեան մէջ

Այլաբերութեան միւս տեսակը փոխանունութիւնն է, որի էութիւնը հանգում է առարկաների կամ երեւոյթների միջեւ եղած առնչութեան հիման վրայ մի առարկայ կոչել միւսի անունով (16): Փոխանունութիւնը սովորաբար ստեղծում է մասի եւ ամբողջի, պարունակողի եւ պարունակելի, յոգնակիի եւ եզակիի, տիրոջ եւ իրի եւ նման առնչութիւնների յարաբերութեամբ: Հեղինակն ընդգծում է այն առնչութիւնը, որը համապատասխանում է նրա գեղարուեստական խնդրին: Նարեկացին, օրինակ, գրում է. «Որ յեգիպտոս միշտ ունիս գարտիգ գդարձն» (Բան Բ, ա), ուր սիրտ բառի տակ հասկացում է անձ բառը: Կամ՝ «Ողբամ գորովայնն, որ երկնեացն գիս» (Բան ԻԲ, ք), ուր ընդգծուած բառը համարժէք է մայր բառին: Կամ «Ընդ խաչեցելոյն ընդ քեզ պաղատիմ» (Բան ԽԲ, ա), ուր փոխանուն բառը վերաբերում է Քրիստոսին: Կամ՝ «Սովաւ գումարին ի պատերազմի որդիք Սիոնի ընդդէմ աշխարհակալին խաւարի» (Բան ՂԲ, գ), ուր սատանայի հիմնական յատկանիշներից մէկով բնութագրուած է ինքը՝ սատանան: Կամ՝ «Ոչխար հաւտին Քրիստոսի գտաւ քոշկեալ» (Բան Կ, ք), ուր ոչխար բառը նշանակում

է Քրիստոնեայ: Փոխանունութիւնների միջոցով եւս Նարեկացին հասել է ֆնարական հերոսի հոգեկան ապրումների նրբին քացայայտման: Այսպէս՝ արեւմաքի ասելու փոխարէն Նարեկացին ստեղծել է քիկունք դարձնել փոխանունութիւնը. «Գիրկս արկի կենցաղոյս սիրոյ եւ ի քեզ քիկունք, փոխանակ դիմաց, դարձուցի» (Բան Ի, Ե): Անհնազանդութեան այս ֆայլը համագոր է աստուած ուրացութեան: Արարքի արտաքին վարուելաձեւը թելադրուած է ներքին հոգեւորամաղքութեամբ: Գերեզման ասելու փոխարէն Նարեկացին ստեղծել է մահուան հոդ փոխանունութիւնը. «Փափայ վերացայ, որ յետ սակաւ մի ժամանակի ի հոդ մահու եմ իջանելոց» (Բան Ի, դ), ուր փոխանունութիւնը շատ աւելի վերաբերում է հոգուն, քան մարմնին:

Ֆնարական հերոսին բնութագրելու համար Նարեկացին յանախ օգտագործում է մահկանացու, երկրածին, անձն իմ, այրս եւ նման փոխաբերութիւններ: Այսպէս՝ «Եւ արդ, ես՝ երկրածինս մարդ, Կենցաղականաւ անկայուն գոյիս զքաղեալ» (Բան Ե, ա), «Եւ արդ, զի՞նչ գործեսցես, անձն իմ կորուսեալ» (Բան Ը, ա), «Եւ արդ, յետինս դաւանողաց, ունայն ի

բարեաց» (Բան ԺԱ, ա), «Եւ արդ, առ երկրածին՝ ո՛ր պաղատեցայց այլս մահացու ամենապատիր» (Բան ՄԱ, ա), «Որովք եւ ինձ՝ մեղաւորիս հողեղինի մարդասիրեսցես ողորմել, Յիսուս» (Բան ՁԱ, գ) եւ այլն:

Փոխանունութեան մի տեսակը հարտասանութեան հին ձեւերէն յայտնի է խելամտութիւն, գրականութեան տեսութեան մէջ՝ սինեկդոխ անունով: Այս դէպքում պատկերաւորութիւնը ստեղծուած է այն բանի շնորհիւ, որ մասի անունն անցնում է ամբողջին, պարունակեալին՝ պարունակողին, տեսակին՝ սեռին, առարկային՝ տիրոջը եւ այլն, որը գեղեցկութեան նրբերանգ է տալիս խօսքին եւ ընթերցողին ստիպում է թափանցել բառի անուղակի իմաստի մէջ: Երբ Նարեկացին ասում է՝ «Ի քեզ նկատեալ հայի, բարեգործ, ամենայն ակն տեսողի» (ԳՆՏԳ, 159), ապա այստեղ մասը հանդէս է գալիս ամբողջի փոխարէն, եւ ակն-աչք փոխանունութիւնը վերաբերում է բոլորին՝ ծաղկից մինչեւ մարդ, հաւաքու կենդանուց մինչեւ հրեշտակներ: Կամ՝ «Եթէ ձեռն մաքուր, խնկով հանդերձեալ, առ քեզ համբարձցի Հասցէ՝ միասցի ընդ իմս ձայնի եւ աղաչողացն աղերս՝ յառաջ մատուցեալ» (Բան Գ, գ), ուր ձեռն փոխանունը դրուած է մարդու փոխարէն: «Եւ աղաղակեցին բերկրալի բերանով օրհնառաք բարբառով, ի շրթունս ընտիրս, ի լեզուս մաքուրս, ի հնչումն երգոց, ի տաւիղ օրհնութեանց» (ԳՆՄ, 411), ուր բերան փոխանունութիւնը կարող էր լինել յոգնակի՝ լեզուններ իմաստով: «Ընդ իմում թշուառիս հոգա, խորան բարձրելոյդ, ձեռն տուր անկելոյս, տանաք երկնային» (Բան Ձ, ք): Երկու փոխանունութիւններն էլ արտայայտում են պարունակեալի եւ պարունակողի առնչութիւն. աստուածածին ասելու փոխարէն Նարեկացին նրան կոչում է աստծու խորան եւ երկնային տանաք: «Այլ ոչ ի մարդ ո՛ր ունիմ գոյս,

Եթէ անիծեալ ի տեսանողէն՝ անյուսադրելի վատիմ» (Բան ԻԱ, գ), ուր եզակին դրուած է յոգնակիի փոխարէն: Տեսակի եւ սեռի առընչութեան հիման վրայ է ստեղծուած հետեւեալ փոխանունութիւնը. «Եւ ի մերկութեանս գրկի փուշս ընդ շուշանաց ժողովեցից» (Բան Կ, ա), ուր շուշաններ բառը փոխարինում է ծաղկներ բառին:

Ի դէպ, Նարեկացին անձնանունները տալու փոխարէն յաճախ դիմում է փոխանունների, այսպէս՝ ըստ մարգարէին եւ առակողին (Բան Ա, ք), ըստ դաւանելոյ աստուածաշնորհին (Բան Բ, ք), ըստ առակողին եւ սաղմոսին (Բան Ձ, ք), ըստ առակարկուին (Բան Ի, գ), ըստ իմաստնոյն բանի (Բան ԻԱ, ք), ըստ առակի աւետարանչին (Բան ԻԶ, ա), ըստ բանի երգողին (Բան ԼԳ, ք), ողբակից մեծ մեղաւորին (Բան ԽԷ, ք) եւ այլն: Այս եւ նման փոխանունութիւնները հասկանալի են ըստ քննարկի, քանի որ Նարեկացին յղում է նրանց խօսքերը, յուշում տեղը եւ եթէ խուսափում է անձնանուններ տալուց, ապա դա անում է ուրիշ եւ արտայայտչականութեան բազմազանութեան համար: Միջնադարի ընթերցողի համար դժուար չի եղել անմիջապէս իմանալ, որ սաղմոսողը Դաւիթ արքան է, իմաստունը՝ Սողոմոնը, աստուածաշնորհը՝ Մովսէս մարգարէն եւ այլն:

Այլաբերութեան յաջորդ տեսակը շրջասութիւնն է: Առարկայի, երեւոյթի կամ անձի անունն փոխարէն տրուած է նրա նկարագրական բնորոշումը այնպիսի յատկանիշի հիման վրայ, որը յուշում է, թէ ինչի կամ ում մասին է խօսքը (17): Շրջասութիւնը կարող է լինել մէկ կամ մի քանի բառերից: Միջնադարի գրականութեան մէջ յատկապէս շատ շրջասութիւնների են դիմել աստուածաշնչական կերպարներ ու կրօնական սրբութիւններն անուանելու համար: Նիւթի խոր իմացութիւնը հնարաւորութիւն էր

տալիս ուղղակի անուններ տալու փոխարեն գտնել այնպիսի շրջասութիւններ, որոնք մի տեսակ բող էին քաշում առարկայի կամ երեւոյթի, անձի կամ կրօնական հասկացութիւնների վրայ՝ տպաւորութիւն գործելու եւ խորհրդաւորութեամբ ծածկելու նպատակով: Շրջասութիւնն այս դէպքում գրեթէ մօտենում է փոխաբերութեանը: Այսպէս՝ սիրտ ասելու փոխարեն Նարեկացին ասում է խորհրդակիր սենեակ, լեզու ասելու փոխարեն՝ փառաքանարան, մարմին ասելու փոխարեն՝ նիւթի խորան, ականջ ասելու փոխարեն՝ լսելիքի պատուհան կամ դուռ, աչքեր ասելու փոխարեն՝ նրազարան, միտք ասելու փոխարեն՝ հանճարի հովիտ, խաչափայտ ասելու փոխարեն՝ մահուան գործիք, մազ կամ հեք ասելու փոխարեն՝ տերեւ, գլուխ ասելու փոխարեն՝ գագաթ, խաչ ասելու փոխարեն՝ քառաթեւ գործիք եւ այլն: Ահամի քանի օրինակներ. «Ելցէ ի խորոց աստի գգայութեանց խորհրդակիր սենեկիս» (Բան Ա, ա). «Ջփառաքանարան հատուածոյ կերպիս ի քէն եղելոյ» (Բան ԺԸ, գ). «Խցի զպատուհան լսելեաց իմոց՝ առ քանիդ կենաց ընդունելութիւն» (Բան Ե, ե). «Ար՝ա փրկութիւն նիւթոյ խորանիս՝ որդւոյս դառնութեան» (Բան ԼԵ, դ). «Եւ նրազարան տեսութեանց կերպիս՝ աղբերց կայլակմունք» (Բան ԿԸ, ա). «Մի՛ գիտիտ հանճարոյս ստուերական պահեր» (Բան ՀԸ, գ). «Ճառագայթ՝ բո փառաց ի յիմաստիցս խորհրդանոց ջահեսցի» (Բան ԶԴ, ա) եւ այլն:

Ահա եւ մի հատուած Մատեանից, ուր աստուածաշնչական անձերը յիշատակուած են շրջասութեամբ.

*Եւ արդ, ո՞ւր իցեն փրկութիւնք,  
Ուր սկզբնահայրն հաւատոց ի  
յուսահատութեանն վայրի*

*Ջանգբութեանն իմ չարիս կրկնէ,  
Մեծն մարգարէից քարամբ քանից  
կոշկոնէ,*

*Արին քարեփառ աշտէին նիզակաւ  
ի մահ սատակէ,*

*Պատկեր նշմարտին ընդ Ահարու  
համայնիւ ջնջէ,*

*Աստուածարեալն՝ վեհից  
յարագողացն վրիժուց մատնէ,  
Մարգարէածին տեսանողն ընդ  
ամաղեկացւոյն առաջի տեառն  
սպանանէ,*

*Նախանձաւորն Աստուծոյ  
երկնատեղաց բոցովն վատնէ,*

*Ստուերին լրումն եւ նորոյս սկիզբն  
Հեծանցին ընտրութեամբ հոսէ,*

*Պետն առաքելոց ընդ Սափիրայի ի  
կենաց գրաւէ,*

*Ջարմանալին քննութեամբ Հոգւոյն  
Բուրումն ինձ մահու ընդ կենացն  
քարոզ խառնէ:*

(Բան ՀԱ, գ)

Անշուշտ, միջնադարի ընթերցողը չի տարակուսել, որ հաւատի սկզբնահայրը Արքայաւոր նահապետն է, մարգարեներից մեծագոյնը՝ Մովսէսը, քարեփառ արին՝ Փենեհեքը, նշմարութեան պատկերը՝ Յեսու գօրապետը, աստուածարեալ վեհը՝ Դաւիթ արքան, մարգարածին տեսանողը՝ Սամուէլ քահանայապետը, Աստուծո նախանձաւորը՝ Եղիա մարգարէն, ստուերի լրումն ու նորի սկիզբը՝ Յովհաննէս Մկրտիչը, առաքելների պետը՝ Պետրոս առաքելը, Սուրբ Հոգու զարմանալի քննողը՝ Պետրոս առաքելը: Իսկ թէ ինչու է քանաստեղծն իրեն արժանի համարում նրանց պարսաւանփին ու դատապարտութեանը եւ ոչ թէ քարեփառութեանը, սա արդէն վերաբերում է քննարկական հերոսի հոգեւորամաղորդութեանը, որը սերտօրէն առնչուում է Մատեանի հիմնական գաղափարներից մէկին՝ հոգու փրկութեանը, որ այստեղ դարձել է հարց ու ելակէտ. «Եւ արդ, ո՞ւր իցեն փրկութիւնք»: Մտածել,

թէ Նարեկացու բոլոր շրջասութիւններն ու այլաբանութեան միւս տեսակները եղել են մատչելի, պարզ ու հասկանալի, ճիշտ չէր լինի: Կուտակումների նախասիրութիւնը իսկապէս կասեցնում է անմիջական հաղորդակցութիւնը: Թէեւ բառիմաստի տեղաշարժն անխուսափելի է այլաբանութիւնների մէջ, սակայն Նարեկացու պատկերաւորման միջոցների արտաքին մակարդակի մէջ չէ բարդութիւնը, այլ պատկերի բազմաշերտութեան եւ բովանդակութեան մէջ: Այդ բարդութիւնն

այսօր աւելի է զգալի, քանի որ Նարեկացու պատկերաւորման միջոցների ատաղձի մէջ շատ բառեր կապուած են աստուածաշնչական կերպարների ու դրուագների, աւետարանական իրադարձութիւնների եւ կրօնական այլ սրբութիւնների հետ: Սակայն այլաբերութիւնների մէջ եւս ակնյայտ է Նարեկացու յարաբերումն ձգտումը հասնելու խօսքի առաւել քնականութեան եւ ճշմարիտ քանաստեղծականութեան:

(շարունակելի)

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

## ԼԵՒՈՆ Դ.

Թագաւորել է Կիլիկեան Հայաստանում 1305-1307

Կիլիկեան Հայաստանի թագաւոր Լեւոն Դ. Թորոս Առաջինի որդին է: Նրա լատինամոլ քաղաքականութեան պատճառով թուլացել էր Կիլիկեան հայկական պետութիւնը: 1307 թուականին 40 հայ իշխանների հետ դաւադրաբար սպանուել է մոնղոլ զօրավար Փիլարդունի կողմից:

1307 թուականին երկու կիլիկահայ իմաստասէրներ զրուցում էին: Մէկն ասում էր.

- Եթէ մեր Լեւոն Դ. թագաւորը խելացի լինէր, չէր սպանուի:

- Ի՞նչ պիտի անէր, որ չի արել, - հարցրեց միւրը:

- Պիտի մերժէր կաթոլիկութիւնը եւ ամբողջովին կտրէր իր կապերը

Ավինյոնի պապի հետ:

- Եւ ի՞նչ կը շահէր:

- Նրա զօրականների թիւը քառասուն հազարով կ'աւելանար: Ճիշտ այդքան հայ զօրականներ հրաժարուեցին ծառայել նրա բանակում, քանզի չցանկացան լինել ու դառնալ կաթոլիկ:

«ԱՐՔԱՅԱՊԱՏՈՒՄ»

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ